ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱԹԵՎԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՆԿՆԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՉ ԼԵԶՎԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԺԳ.00.02 – Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Կ. Ա. Հայրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ի. Կ. Կարապետյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մ. Օ. Գյոդակյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. ապրիլի 25-ին ժամը 12.00 -ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. մարտի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ **Ա.Հ.Սվաջյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության արդիականությունը:</u> ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման կարևոր պահանջներից է ոչ լեզվական ֆակուլտետում անգլերենի ուսուցման բովանդակության արդիականացումը: Տվյալ դասընթացի բարեփոխման շրջանակներում անհրաժեշտ է շարունակաբար վերանայել մասնագիտական կողմնորոշման անգլերենի (ESP) ուսուցման ողջ համակարգը, քանի որ այն չի բավարարում այդ լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցվելու ապագա մասնագետների մերօրյա պահանջները:

Օտարալեզու հաղորդակցությունը թե՛ միջանձնային, թե՛ մասնագիտական մակարդակներում չի կարող տեղի ունենալ առանց ունկնդրության կարողությունների և հմտությունների: Մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիաների կարևոր բաղադրիչ է ունկնդրության կոմպետենցիան, որը մասնագիտական կողմնորոշման դասընթացներում անհրաժեշտ չափով չեն զարգացնում, չնայած գործող ESP ուսումնական ծրագրերում խնդիր է դրվում զարգացնել խոսքային գործունեության բոլոր հմտությունները՝ խոսելու, ունկնդրելու, կարդալու և գրելու: Դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել, որ ՀՀ բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզուների ուսուցման մանկավարժական պայմանները հեռու են բավարար լինելուց: Նույնիսկ ծրագրային պահանջներն իրականացվում են մասնակիորեն: Ընդ որում, խոսքային գործունեության չորս տեսակից ունկնդրության կարողության ձևավորումն, առանց բացառության, բոլոր դասընթացների ամենաթերի կողմն է: Կարևոր է նշել, որ մշակված չեն մասնագիտական կողնորոշման դասընթացի համար նախատեսված ունկնդրության ուսուցման արդյունավետ ռազմավարություններ:

Վերջինիս ուսուցման համատարած բարձիթողի վիճակը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, որոնցից ամենաէականն այն է, որ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում ունկնդրությունը դիտվում է իբրև խոսքային ընկալողական գործունեության առավել դժվար յուրացվող տեսակ:

Հետազոտության նպատակի և խնդիրների տեսանկյունից կարևորվում են ոչ լեզվական ֆակուլտետներում ունկնդրության ուսուցմանը (Е.В. Александрова 2001, А.В. Гаврилова 2006, О.А. Обдалова 2001, В. А. Яковлева 2003), ունկնդրության վարժությունների մշակմանը (CEFR[1], М. П. Базина 1988, Е. Г. Богданова 1984, К. М. Бржозовская 2003, Н. В. Войтик 2015), ունկնդրության խոսակցական հայեցակերպին (А.В. Гаврилова 2000), օտարալեզու ունկնդրության տեքստերի ընտրության և կիրառման սկզբունքներին, չափանիշներին (И.А. Гончар 2011, Е.С. Горюнова 2011, Е. И. Латушко 2004, М. В. Куимова 2005, Е. А. Карташова 2017, И.Д. Попова 2012), ունկնդրության դժվարություններին (Ռ.Ռ. Խաչատրյան 2012, Н.В. Елухина, М.Г. Каспарова 1991), ունկնդրության դիդակտիկական հիմքերին (Я.В. Зудова 1997, Е. В. Крылова 1994), ունկնդրության արտալսարանային, ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը, ունկնդրության տեսակներին (Л.Ю. Кулиш 1991, Л.И. Иванова 1997, Е.И. Пассов 1991), ունկնդրությանը վերաբերող դասագրքերի, դասանյութերի վերլուծությանը (2003 Черкашина) նվիրված աշխատանքները: Վերոնշյալ աշխատությունները մեծ ներդրում ունեն օտարալեզու ունկնդրության ուսումնասիրման և ուսուցման բարելավման գործում, սակայն նշված և այլ աշխատանքներում ուսումնասիրության առարկա չեն դարձել անգլերենի ունկնդրության կարողությունների ձևավորման և զարգացման առանձնահատկությունները, հաշվի առնելով հայալեզու ուսանողների լսարանը, նրանց լեզվական մակարդակը՝ B1, B2, ունկնդրության կարողությունների ձևավորման դժվարությունները, մասնագիտական և ճանաչողական պահանջմունքները, ինչպես նաև ունկնդրության կարողությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

Հիմք ընդունելով ESP դասընթացում ունկնդրության ուսուցումը բարելավելու կարևորությունը՝ սույն հետազոտության առաջ խնդիր է դրվում մշակել անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ, որն առավելագույնս

[1] The Common European Framework of Reference. (2001). http://culture.coe.fr/lang/eng/eedu2.4.htm

կնպաստի ուսումնական ծրագրերով նախատեսված ինչպես գործնական, այնպես էլ կրթական և մշակութային նպատակների իրականացմանը:

Առաջարկվող մեթոդական համակարգը մշակելու արդիականությունը հիմնավորվում է մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացի կազմակերպման որակը բարելավելու կարևորությամբ, քննարկվող հիմնախնդրի թե՛ տեսական, թե՛ գործնական մակարդակներում ոչ բավարար մշակվածությամբ, ունկնդրության ուսուցման և ուսումնառության, օտարալեզու բանավոր հաղորդակցման մակարդակն արդի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Վերոնշյալից հետևում է, որ սույն **<u>հետազոտության նպատակը</u>** մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ունկնդրության ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգի մշակումն է:

<u>Հետազոտության օբյեկտը</u>՝ ոչ լեզվական ֆակուլտետում մասնագիտական կողմնորոշման անգլերենի ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային գործունեության գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u>՝ մասնագիտական կողմնորոշման անգլերենի ունկնդրության ուսուցման մեթոդական համակարգն է:

<u>Հետազոտության գիտական վարկածը.</u> ոչ լեզվական ֆակուլտետում անգլերեն լեզվով ունկնդրության կարողությունների և հմտությունների ձևավորման և զարգացման գործընթացը կհամապատասխանի արդի պահանջներին, եթե

- վերլուծվեն մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ուսումնամեթոդական համալիրները, ուսումնական ծրագրերը, ուսանողների լեզվական ընկալողական մակարդակը, ճանաչողական և մասնագիտական պահանջմունքները,
- մշակվի ունկնդրության կարողությունների և հմտությունների զարգացման մեթոդական համակարգի շարժընթացը ներկայացնող օրինակելի մոդել, որի հիմքում ընկած են հստակ մեթոդաբանությամբ ընտրված ուսուցման մեթոդներ և ռազմավարություններ, տեսական և փորձարարական վերլուծությամբ նախատեսված ընթացակարգեր, ունկնդրության տեքստեր և վարժություններ, ապա փորձարարական

ուսուցման ընթացքում և տվյալների ամփոփմամբ կհիմնավորվի առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Նշված նպատակն իրականացնելու և առաջ քաշված վարկածը ստուգելու համար առաջադրվել են հետազոտության հետևյալ խնդիրները.

1. վերլուծել մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում շրջանառվող անգլերենի չափորոշիչները, ուսումնական ծրագրերը, դասագրքերը, ուսանողների լեզվական մակարդակը և նպատակադիրքորոշումները,
2. բացահայտել ունկնդրության կոմպետենցիայի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև նրա զարգացմանը խոչընդոտող ընդհանուր և մասնակի, օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները,
3. ընտրել ունկնդրության ուսուցման օպտիմալ ռազմավարություններ և մեթոդներ, տեքստեր և վարժություններ, որոնք ընկած են ունկնդրության կազմակերպման օրինակելի մոդելի հիմքում և փորձարարական ուսուցմամբ հիմնավորել առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ **մեթոդներով.**

1. ***Տեսական մեթոդներ.*** Թեմային վերաբերող գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, ունկնդրությանը վերաբերող տարբեր տեսությունների դասակարգում, ստացված արդյունքների ընդհանրացում:
2. ***Էմպիրիկ հետազոտության մեթոդներ.*** Անկետավորում, թեստավորում, հարցազրույց, ուսանողների աշխատանքի դիտարկում, ստացված արդյունքների համեմատություն, չափում:
3. ***Վիճակագրական մեթոդներ.*** Ուսանողների անձնային և լեզվական տվյալների գրանցում, հաշվառում, ըստ ցուցիչների նրանց լեզվական մակարդակների սանդղակավորում, փորձարական և ստուգողական խմբերի փորձարկման արդյունքների մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Անկետավորման և թեստավորման ընթացքում և արդյունքում բացահայտվել են փորձարարական ուսուցման մասնակիցների անհատական առանձնահատկությունները, նրանց լեզվական մակարդակը, ունկնդրության մանկավարժական պայմանները :

<u>Հետազոտության մեթոդաբանական հիմքում</u> ընկած են երկլեզվության և բազմալեզվությանը (Dewaele 2012, Canale, M. & Swain, M. 1980, Joe Sheils[2] 1993 և ուրիշ.), հնչյունական փոխազդեցությանը (Մ. Գ. Աստվածատրյան 1985, Կ. Ա. Հայրյան 2008 և ուրիշ.), օտարալեզու բնագրերի ունկնդրության ընտրության և կիրառման սկզբունքներին (Е. А. Карташова 2017, Е. В. Носонович, Р. П. Мильруд 1999, И. Д. Попова 2012 և ուրիշ.), ունկնդրության հոգեբանական, լեզվաբանական, հոգելեզվաբանական դժվարություններին (A. Bradford 2007, S. A. Bird, & J. N. Williams 2002, D. Evans, P. Zeun, & R. Stanier 2013, C. Goh 2008, S. A. McLeod 2010, Wang, Wudong 2004, M. Wilson 2003, И. А. Зимняя 1973, Я. М. Колкер, Е. С. Устинова 2002), հնչյունական, ունկնդրության կոմպետենցիաներին (V. Cook 1995, I. Luka 2007, P. Nathan 2008, И. А. Зимняя 2003, А. А. Шахназарян 2014), ունկնդրության ուսուցման մոդելներին (И. В. Щукина 2009, J. H. Hulstijn 2003), ունկնդրության ուսուցման ռազմավարություններին (J. Cross 2011, S. Graham 2003, T. S. Lee 2015, T. Lynch 1995, E. Macaro 2001, 2007, D. Mendelsohn 2006, M. H. Tafaghodtari 2010) վերաբերող տեսությունները և հայեցակարգերը:

<u>Հետազոտության գիտական նորույթն</u> այն է, որ

- ստեղծվել է ունկնդրության ուսուցման հստակ ընթացակարգերով իրականացվող եռափուլ մոդել, որը ներկայացնում է հաղորդակցական մոտեցման սկզբունքներով մշակված ընթացակարգեր, ունկնդրողական մասնագիտական տեքստեր, դրանց հետ աշխատանքի նախատեքստային, տեքստային, հետտեքստային վարժություններ,
- համապատասխան մեթոդաբանական և մեթոդական գրականության ուսումնասիրության արդյունքում ներդրվել են օտարալեզու ունկնդրության ուսուցման

[2] Sheils, Joe. Communication in the Modern Languages Classroom : project n⁰ 12 "Learning and Teaching Modern Languages for Communication". Strasbourg, 1993.

արդյունավետ ռազմավարություններ, մեթոդներ, անգլերեն պատմագիտական ենթալեզվի յուրացմանը միտված վարժություններ, առաջադրանքներ և տեքստեր,

- ըստ նշված մոդելի մշակվել և փորձարկվել է մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ունկնդրության ուսուցման մեթոդական համակարգ, որը ներկայացնում է մասնագիտական և ոչ մասնագիտական ունկնդրողական տեքստեր, դրանց հետ աշխատանքի վարժությունները: Թե՛ տեքստերը, թե՛ վարժությունները ընտրվել և մշակվել են հաշվի առնելով ունկնդրման վերճանաչողական, փոխհատուցման ռազմավարությունները:

<u>Հետազոտության տեսական նշանակությունը</u>

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսությունն ու պրակտիկան հարստացել են օտարալեզու ունկնդրության ուսումնասիրության շուրջ վերոնշյալ ձեռքբերումներով՝ հաշվի առնելով բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում անգլերենի ունկնդրության ուսուցման առանձնահատկություններն ու դժվարությունները: Աշխատության տեսական նշանակությունն այն է, որ ճանաչողական- հաղորդակցական մոտեցման սկզբունքներով մշակվել, տեսականորեն հիմնավորվել և փորձարարական ուսուցմամբ հաստատվել է առաջարկվող մոդելի արդյունավետությունը: Ըստ այդմ՝ առաջարկվում է ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվին հատկացվող սահմանափակ դասաժամերը փոխհատուցող մեթոդական ճկուն, դինամիկ համակարգ, որը խոսքային գործունեության մյուս տեսակների հետ կնպաստի ունկնդրության ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը.</u>

Մշակված և փորձարարական ուսուցմամբ փորձարկված ունկնդրության զարգացման եռափուլ ընթացակարգային մոդելը կարող է կիրառվել մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացներում: Հետազոտության եզրակացությունները և վերջնարդյունքները, առաջադրված դրույթները կարող են օգտագործվել այլ դասընթացներ նախագծողների, ուսումնական պլաններ, ծրագրեր

կազմողների, դասագրքերի հեղինակների և գործնական անգլերեն դասավանդողների կողմից:

Հետազոտության հիմնական փուլերը.

Սույն հետազոտությունը իրականացվել է հինգ տարվա ընթացքում հետևյալ 3 փուլերով.

Առաջին փուլում (2010-2011) հավաքագրվել, ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ մեթոդական, մանկավարժական, լեզվաբանական, հոգեբանական, լեզվահոգեբանական և բազմալեզվադիդակտիկական գրականություն: Զրույցի, հարցման և անկետավորման միջոցով բացահայտվել են ուսանողների ճանաչողական, մասնագիտական պահանջմունքները և դրդապատճառները: Տվյալ փուլի ավարտին մշակվել է հետազոտության գիտական-հասկացական ապարատը:

Երկրորդ փուլում (2011-2013) հետազոտական աշխատանքը հիմնականում ծավալվել է ձևավորող, որոնողական և ստուգողական փորձարարության ուղղությամբ: Բազմակողմանի հարցումների և թեստավորման արդյունքների ամփոփման հիման վրա ի հայտ է բերվել մասնագիտական կողմնորոշման անգլերեն բանավոր խոսքը ընկալելու կարողությունների և հմտությունների զարգացման առավել տիպական երեք փուլ: Տվյալ համակարգի փորձարարական ուսուցման համար կազմվել են համապատասխան վարժություններ և տեքստի շուրջ աշխատելու առաջադրանքներ ունկնդրության ուսուցման գործընթացը եռափուլ ընթացակարգերով կազմակերպելու նպատակով: Այս փուլում սկսվել է ատենախոսության շարադրումը:

Երրորդ փուլում (2013-2014) իրականացվել է հաստատող փորձարարական աշխատանք, որի ընթացքում լրամշակվել և ավարտուն տեսքի են բերվել ունկնդրության ուսուցման վարժությունները, առաջադրանքները, վերլուծվել և ամփոփվել են փորձարարական ուսուցման արդյունքները: Ավարտվել է ատենախոսության շարադրումը և ներկայացվել մասնագիտական քննարկման:

Հետազոտության փորձաքննությունը և ներդրումն իրականացվել են Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում (ՀՊՄՀ),

Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) և Երևանի «Հայբուսակ» համալսարանում: Փորձարարական ուսուցումը կազմակերպվել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության բաժնի առաջին և երկրորդ կուրսերում: Հետազոտության հիմնական դրույթները և փորձարարական ուսուցման արդյունքները պարբերաբար ներկայացվել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների 2013-2015 թվականների տարեկան գիտաժողովներում, օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտների և հայցորդների 2012 - 2015 թվականներին անցկացված տարեկան ատեստավորման նիստերին, ինչպես նաև անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնում օտար լեզուների դասավանդման այլ խնդիրների նվիրված սեմինարներին:

Ատենախոսության վերաբերյալ հրապարակվել է 7 գիտական հոդված:

<u>Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները</u>.

1. Մասնագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման դասընթացում ունկնդրության ուսուցումը պետք է կազմակերպվի խոսողության, ինչպես նաև հնչյունաբանության, բառապաշարի և քերականության գործնական ուսուցման հետ փոխկապակցված և փոխհամաձայնեցված, ինչը հնարավորություն է ընձեռում ապահովել ունկնդրության կարողությունների և հմտությունների բնականոն զարգացումը:
2. Անգլերեն պատմական կողմնորոշման դասընթացում արդյունավետ է կիրառել լսարանային և արտալսարանային աշխատանքի շրջանակներում կիրառվող ունկնդրության ուսուցման հաղորդակցական, վերճանաչողական և փոխհատուցման ռազմավարությունները, հաշվի առնելով ազգային լսարանում ծագող ունկնդրության օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները:
3. Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման առաջարկվող համակարգում առաջին պլան են մղվում հաղորդակցական և փոխհատուցման ռազմավարությունները, քանի որ ոչ բավարար լսարանային ժամերի պայմաններում, սկզբունքային նշանակություն են ստանում ուսանողների արտալսարանային

ունկնդրության կազմակերպման, նրանց ինքնուրույն աշխատանքի մշակույթի ձևավորման հիմնախնդիրները:

<u>Աշխատանքի կառուցվածքը և ծավալը</u>: Ատենախոսությունը բաղկացած է 153 համակարգչային էջից (առանց հավելվածների): Այն ներառում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ, 5 գծապատկեր, 13 աղյուսակ և 3 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

Ատենախոսության առաջին՝ **«Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման և յուրացման առանձնահատկությունները ՀՀ ոչ լեզվական ֆակուլտետներում»** գլխում, որը բաղկացած է երեք ենթագլխից, ներկայայցվում են մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ունկնդրության ուսուցման առանձնահատկությունները:

Առաջին գլխի առաջին **«Օտար լեզվով ունկնդրության հիմնական բնութագրերը»** ենթագլխում ներկայացվում են ոչ լեզվական բուհում օտար լեզվի ուսուցման նպատակը, խնդիրները, ուսումնական, արտաուսումնական գործոնները: Բացահայտվում են ունկնդրության ուսուցման միտումները, դժվարությունները: Ընդհանուր գծերով վերլուծվում են մասնագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում կիրառվող ուսումնամեթոդական ձեռնարկները, դասագրքերը: Դրական միտումներից առանձնացվում է այն, որ վերջին տարիներին պատմական կողմնորոշման անգլերենի ուսուցման տևողությունն ավելացել է և չորս կիսամյակից դարձել է յոթ կիսամյակ:

Լեզվաբանության, հոգելեզվաբանության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսանկյուններից սահմանվում է «ունկնդրություն» հասկացությունը, ներկայացվում են նրա հիմնական բաղադրիչները՝ լսողական ունակությունը, խոսքի լսողությունը, հիշողության հորինվածքը, հավանական կռահումը, իմաստավորման հորինվածքը և տեմպը (Աստվածատրյան 1985: 203-213), անվանական կռահումը և ասույթի իմաստավորումը (Завьялова, Ильина 2005[3]):

Բացահայտվում են օտար լեզվով ունկնդրությանը խոչընդոտող դժվարությունները՝ մեթոդական անհրաժեշտ համակարգերի բացակայությունը, դասավանդողների և ուսանողների բացասական նպատակադիրքորոշումները և այլն:

Երկրորդ **«Օտարալեզու ունկնդրության ուսուցման օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները»** ենթագլխում վերլուծվում են ոչ լեզվական ֆակուլտետում օտարալեզու ունկնդրության ուսուցման առավել էական օբյեկտիվ (մայրենի և թիրախային լեզուների հնչյունական, քերականական, բառային ընդհանրություններ և տարբերություններ), և սուբյեկտիվ (ունկնդրության ուսուցման հոգեբանամանկավարժական պայմաններ, ունկնդրվող նյութի յուրացման յուրահատկություններ և այլն) դժվարությունները կապված բնագիր տեքստի ընկալման, նոր, ներզոր բառապաշարի յուրացման, օպերատիվ հիշողության անբավարար զարգացման, մասնագիտական ենթալեզվի մասնավորապես՝ եզրույթների, հապավումների, անձնանունների արտասանության և այլ լեզուներից փոխառությունների իմաստավորման հետ: Առանձնացվում են հինգ խումբ դժվարություն և դրանց գնահատման օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշները: Օտարալեզու ունկնդրության լեզվական դժվարությունների առաջին խումբը պայմանավորված է ունկնդրության որպես խոսքային գործունեության տեսակի և նրա իրականացման պայմաններով: Երկրորդ խումբը պայմանավորված է ունկնդրվող նյութն ընկալողի լեզվաբանական առանձնահատկություններով, որոնք կարող են լինել հնչյունաբանական, քերականական, բառային: Երրորդ խումբը պայմանավորված է ունկնդրվող նյութի իմաստային մշկմամբ:

[3] Завьялова В.М., Ильина Л.В. - Практический курс немецкого языка (для начинающих). М.- 2005. – 877с.

Չորրորդը՝ ներկայացնում է ուսումնասիրվող լեզվի հանրամշակութային առանձնահատկությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում ունկնդրության իրական նյութերում: Հինգերորդը պայմանավորված է տեքստի ունկնդրության ոճաբանական դժվարություններով:

Երրորդ **«Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման բովանդակությունը և ծրագրային պահանջները ոչ լեզվական ֆակուլտետում»** ենթագլխում բացահայտվում են ունկնդրության ուսուցման վերճանաչողական, ճանաչողական, հուզազգայական և փոխհատուցման ռազմավարությունները: Նշվում է, որ ճանաչողական ռազմավարություններն ենթադրում են կրկնելու, խմբավորելու, համառոտագրելու, մտապահելու գործառնություններ, իսկ հուզազգայական ռազմավարությունները բարենպաստ հող են ստեղծում դրական հուզական դաշտում համագործակցելու համար: Առանձնացվում է հատկապես հաղորդակցական ռազմավարությունը, որը ենթադրում է ինչպես լեզվաբանական, այնպես էլ արտալեզվաբանական հենքային գիտելիքների կիրառում: Ընդգծվում են բնագրային տեքստերի ունկնդրության ճանաչողական, սոցիալականացնող, դաստիարակող գործառույթները:

Երկրորդ **«Առաջարկվող մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական հիմնավորումը»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին **«Ունկնդրության փոխկապվածությունը խոսքային գործունեության մյուս տեսակների հետ»** ենթագլխում ներկայացվում է ունկնդրության կապը խոսողության, գրելու և ընթեցանության հետ, վերլուծվում են ունկնդրության տարբեր մոդելներ՝ առաջին պլան մղելով փոխներգործուն, համագործակցային, վերճանաչողական ռազմավարությունները և թեստերի գործառույթները՝ ուսուցողական, դաստիարակչական, վերահսկողական: Առանձնացվում են Ի. Վ. Շչուկինայի ունկդրության ուսուցման բազմամակարդակ և Ի. Ա. Գոնչարի օտարալեզու տեքստի ուսուցման մոդելները, որոնցում շեշտադրվում է թե՛ խոսքային արտադրողական, թե՛ ընկալողական

տեսակների ուսուցման դերը, քանի որ դրանք նպատակահարմար է կիրառել անգլերենից ըստ CEFR[4]-ի A2, B1 մակարդակ ունեցող հայալեզու ուսանողների համար:

Ընդգծվում է այն գաղափարը, ըստ որի՝ արևմտյան մոդելներում ավելի շատ շրջանառվում են վերճանաչողական ռազմավարության հիման վրա ստեղծված մոդելները, իսկ ռուսական մոտեցումներում դեռևս գերակայում են գործունեության տեսության սկզբունքները:

Առաջարկվող մոդելում առաջնությունը տրվում է փոխահատուցող ռազմավարությանը: Հիմնավորվում է օտար լեզվով ունկնդրության, խոսողության, ընթերցանության և գրության ուսուցմանը հատկացվող ժամանակի հարաբերակցության վերանայման անհրաժեշտությունը: Այդ նպատակով իրականացվել է հարցում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական համալսարանի և Երևանի «Հայբուսակ» համալսարանի ոչ լեզվական ֆակուլտետների օտար լեզվի դասընթացն ավարտած 85 ուսանողների շրջանում: Ստորև ներակայցվում է հարցման արդյունքները.

<u>Աղյուսակ 1.</u>

Օտար լեզվով	Բանավոր խոսք						Գրավոր խոսք						
Ուսումնական փուլեր	Խոսողություն			Ունկնդրություն			Ընթերցանություն			Գրավոր խոսք			
	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	կարևոր է	հետաքրքիր է	օգտակար է	
I - փուլ	82	83	81	39	34	42	41	17	54	11	4	23	
II - փուլ	81	79	73	43	36	39	33	24	49	13	0	31	

[4] The Common European Framework of Reference. (2001). http://culture.coe.fr/lang/eng/eedu2.4.htm

III - փուլ	83	73	80	38	35	37	41	21	51	18	6	38	

Նշված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսանողներից շատերը գիտակցում են, որ միայն մասնագիտական գիտելիքներով, առանց մասնագիտական կողմնորոշման անգլերենի իմացության հնարավոր չէ տեղ գտնել հետագայում աշխատաշուկայում:

Երկրորդ **«Օտար լեզվով ունկնդրությունը մասնագիտական և հաղորդակցական կոմպետենցիայի համատեքստում»** ենթագլխում սահմանվում են «մասնագիտական կոմպետենցիա» և «հաղորդակցական կոմպետենցիա» հասկացությունները: Խնդիր է դրվում կիրառել յուրահատուկ փոխհատուցող ռազմավարություն, շեշտը դնելով ուսանողների դրդապատճառային կոմպետենցիայի ձևավորման վրա: Կարևորվում են ուսանողի մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական գործոնները, դասախոսի մեթոդական զինանոցը, լեզվակիր մասնագետների վարքագծային և հաղորդակցության մոդելները, տեղեկատվության փոխանցման միջոցներն ու տեխնոլոգիաները:

Երրորդ **«Անգլերեն պատմագիտական ենթալեզվի համատեքստում մշակված ունկնդրության ուսուցման համալիր վարժությունների համակարգը»** ենթագլխում ներկայացվում է առաջարկվող մեթոդական համակարգը, որը ներառում է համապատասխան վարժությունների և առաջադրանքների համալիր, հանգամանորեն հիմնավորվում է առաջարկվող վարժությունների ընտրության սկզբունքները: Վարժություններն ընտրվել են ըստ ունկնդրության լեզվական դժվարությունների, ուսանողների լեզվական մակարդակի, ունկնդրության տիպերի և տեսակների /ակտիվ, պասիվ, տարբերակող, ընկալողական, գնահատողական-վերլուծական և այլն/:

Անգլերեն լեզվով ունկնդրության փորձարարական ուսուցումը կազմակերպվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության բաժնի բակալավրատի առաջին և երկրորդ կուրսերում:

Անգլերեն ունկնդրության ուսուցումը փորձարարական խմբում իրականացվել է հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման ունակությունների և կարողությունների ձևավորման ուղղություններով (Зимняя 1972, Murphy 1991, Աստվածատրյան 1985): Փորձարարական խմբի ինչպես ունկնդրության բաղադրիչների, այնպես էլ ունկնդրության ընդհանուր ունակությունների և կարողությունների զարգացման օբյեկտիվ պատկերը բացահայտվել է ուսուցման յուրաքանչյուր փուլից հետո կազմակերպված թեստային հարցման միջոցով, որին մասնակցել է նաև ստուգողական մեկ խումբ: Այդ երկու խմբում արձանագրված արդյունքների համեմատական վերլուծությունը ի հայտ բերեց փորձարարական խմբի ունկնդրության թե՛ ըստ բաղադրիչների և թե՛ ընդհանուր կարողությունների և հմտությունների զարգացման բացահայտ առավելությունը: Փորձարարական խմբի արդյունքները շուրջ 30%-ով գերազանցեցին ստուգողական խմբի ուսանողների արդյունքները: Ուստի փորձարարության արդյունքները անվերապահորեն հանդիսանում են տվյալ հետազոտության հիմքում ընկած մեթոդական համակարգի արդյունավետության գրավականը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Առաջարկվող մոդելում անգլերեն ունկնդրության ուսուցման ճանաչողական, փոխահատուցման, հուզազգայական ռազմավարությունները կիրառվում են ուսուցման բոլոր փուլերում: Սակայն անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում նպատակահարմար է կիրառել վերոնշյալ ռազմավարություններն ուսուցման տարբեր փուլերում, երբ հաշվի ենք առնում ուսանողների լեզվական և լեզվաբանական կոմպետենցիայի մակարդակները:

2. Օտար լեզվով ունկնդրության, խոսողության, ընթերցանության և գրության ուսուցմանը հատկացվող ժամանակի հարաբերակցությունը հնարավոր է որոշել, եթե հաշվի ենք առնում հայերեն և անգլերեն լեզուների յուրացման ընդհանրությունները և տարբերությունները, ինչպես նաև պատմահրավագիտական կողմնորոշման անգլերենի ուսուցման բովանդակությունը: Ընդ որում, ոչ լեզվական ֆակուլտետում հնարավոր է ավելացնել ունկդրության չափաբաժինը միայն արտալսարանային՝ հնչյունաբանական, բառային, քերականական, ինչպես նաև հանրամշակութային, գործաբանական բնույթի դժվարությունները հաղթահարելու առաջադրանքների ավելացմամբ:

3. Անգլերենի մասնագիտական /պատմական/ կողմնորոշման դասընթացում կարևորվում են ուսանողի մասնագիտական կոմպետենցիայի ձևավորման թե՛ ուսումնական, թե՛ արտաուսումնական գործոնները, դասախոսի մեթոդական զինանոցը, լեզվակիր մասնագետների վարքագծային և հաղորդակցության մոդելները, տեղեկատվության փոխանցման միջոցներն ու տեխնոլոգիաները:

4. Օտարալեզու խոսքային գործունեության մյուս տեսակների համամասնական զարգացման շրջանակում ունկնդրության ուսուցումը նույնպես պետք է կազմակերպվի խիստ սեղմ ժամանակահատվածում, ինչը կանխորոշում է այդ գործընթացի իրականացման համար նախատեսված տեքստերի ծավալը, կառուցվածքը և բովանդակությունը:

5. Ոչ լեզվական ֆակուլտետում օտար լեզվի դասավանդման գործընթացում հնարավոր է էականորեն բարելավել ունկնդրության ուսուցումը, եթե կիրառվի հնչույթային լսողության, օպերատիվ հիշողության և խոսքի հավանական կռահման ունակությունների ու կարողությունների փոխկապակցված ձևավորման և զարգացման համալիր ծրագիր:

6. Փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծությունը և ամփոփումը ցույց է տալիս, որ փորձարարական խմբում ունկնդրության ընթացքում ձևավորված կարողությունների աճի շարժընթացը վերստին հաստատում է առաջադրված վարկածի արժանահավատությունը և մեթոդական համակարգի արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ տպագրված հոդվածներում.

1. Գևորգյան Տ., Օտարալեզու խոսողության և ունկնդրության փոխկապվածությունը մեթոդական որոշ մեկնաբանություններում, Օտար լեզուները Հայաստանում, Երևան, 2013-1, էջ 48-53:

2. Գևորգյան Տ., Օտարալեզու ունկնդրության արդյունավետության կախվածությունը մարդու ռեպրեզենտատիվ (ներկայացուցչական) համակարգերից, Մանկավարժական միտք, <<Զանգակ>> հրատ., Երևան, 2013 – 1-2, էջ 186-191:

3. Գևորգյան Տ., Ոչ լեզվական ֆակուլտետում դրդապատճառի և ուշադրության գործառույթները օտար լեզվով ունկնդրության ուսուցման գործընթացում, Մանկավարժական միտք, <<Զանգակ>> հրատ., Երևան, 2014 – 1-2, էջ 200-205:

4. Գևորգյան Տ., Օտարալեզու խոսքի ունկնդրության ուսուցման դժվարությունները ոչ լեզվական ֆակուլտետում, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Երևան, 2014 N2 (11), էջ 103-113:

5. Գևորգյան Տ., Ունկնդրության հիմնական բնութագրերն օտար լեզուների ուսուցման մեթոդիկայի տեսանկյունից, Մանկավարժական միտք, <<Զանգակ>> հրատ., Երևան, 2015 – 1-2, էջ 227-236:

6. Gevorgyan T., Listening as somehow a “neglected” language skill in terms of research, Մանկավարժական միտք, <<Զանգակ>> հրատ., Երևան, 2016 – 3-4, էջ 160-165:

7. Հայրյան Կ., Գևորգյան Տ., Անգլերեն լեզվով ունկնդրության ուսուցման առանձնահատկությունները Հայաստանի բուհերի ոչ լեզվական ֆակուլտետներում, <<Մխիթար Գոշ>>, Գիտական հոդվածներ, 2017/2:

Татевик Гургеновна Геворкян

Методическая система развития умений аудирования английского языка на неязыковом факультете

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - “Методика преподавания и воспитания” (английский язык).

Защита диссертации состоится 25-го апреля 2018г. в 12.00

на заседании специализированного совета 020 ВАК "Педагогика" по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010 г. Ереван. Ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Аудированию как важное составляющее коммуникативной компетенции в должной мере в профессионально - ориентированном курсе английского языка не обучается. Эффективная методика обучения аудированию позволит успешно осуществить программные требования, с учетом культурных, образовательных и практических целей обучения иностранным языкам, сформировать у будущих историков коммуникативно-профессиональную компетенцию на завершающем этапе изучения английского языка.

Разработка эффективной методики обучения аудированию в профессионально-ориентированном курсе английского языка обосновывается важностью повышения качества профессионального образования, недостаточной сформированностью аудитивной компетенции на историческом факультете.

Цель исследования: разработка методической системы обучения аудированию в профессионально-ориентированном курсе английского языка, эффективность которой обосновывается результатами экспериментального обучения.

Задачи исследования:

1. выявить особенности формирования и развития аудитивной компетенции, объективные и субъективные трудности препятствующие развитию;

3. проанализировать учебники, учебные планы, программы, языковой уровень студентов и направленность их целеполагания в профессионально-ориентированном курсе английского языка;

4. выбрать оптимальные стратегии и методы, эффективные тексты и упражнения обучения аудированию;

5. создать оптимальную модель обучения аудированию и опытным обучением обосновать эффективность предлагаемой методической системы.

Научная новизна исследования:

- Создана трехступенчатая модель обучения аудированию (предтекстовая, текстовая, посттекстовая), с учетом анализа научно-методической литературы, учебных программ, учебников и профессионально - ориентированного курса английского языка.
- Отобраны и апробированы эффективные стратегии и методы обучения, на их основе разработаны упражнения для развития навыков и умений аудирования.
- Разработана методическая система обучения аудированию в профессионально-ориентированном курсе английского языка по функциональным и содержательным характеристикам предложенной модели, эффективность которой обоснована в процессе экспериментального обучения.

Теоретическая значимость исследования заключается в том, что с точки зрения когнитивно - коммуникативного подхода была разработана, теоретически и опытным обучением апробирована эффективность разработанной методики.

Практическая значимость исследований.

На основе трехэтапной модели аудирования была разработана методическая система обучения английскому языку на неязыковом факультете. Она включает в себя набор поэтапно выполняемых упражнений, задач и текстов для прослушивания, которая может быть успешно применена в профессионально-ориентированных курсах английского языка. Основные результаты исследования могут быть успешно использованы в процессе проектировании новых курсов, составления учебных планов и программ, создания учебников, а также преподавателями, преподающими практический английский язык.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений.

По теме диссертации опубликованы 7 статей.

Tatevik Gurgen Gevorgyan

Methodological System of Developing English language listening skills at non-linguistic faculty

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Methods of Teaching and Education" (English).

The defense of the thesis will be held at 12.00 on April 25, 2018, at the session of the Special Board "Pedagogy" 020 HAC (Higher Attestation Commission) to award scientific degrees at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

Address: Tigran Mets 17, 0010, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. The listening comprehension competence as an important component of the communicative competence is not developed properly in a professionally - oriented English teaching course. An effective method of teaching listening will allow to implement successfully the program requirements, taking into account cultural, educational and practical goals of teaching English, to form the communicative and professional competences of future historians at the final stage of learning English.

The development of an effective method of teaching listening comprehension in a professionally oriented English course is justified by the importance of improving the quality of vocational education, the insufficient formation of listening proficiency and communicative competencies at the Faculty of History.

The aim of the research: to develop the methodological system for teaching listening comprehension in a professionally - oriented English course, the effectiveness of which should be confirmed by the results of experimental training.

The objectives of the research are:

1. to reveal the features of forming and developing listening comprehension competence, as well as general and partial, objective and subjective difficulties that hinder its development;

2. to analyze textbooks, curricula, programs, students' language level and the orientation their goal setting in a professionally - oriented English course;

3. to select optimal strategies and methods, effective texts and exercises for teaching listening comprehension;

4. to create a model of organizing listening comprehension and to justify the effectiveness of the proposed methodology in experimental teaching.

The scientific novelty of the research:

The research has created a three-stage model of teaching listening (pre-text, text, post-text), taking into account the analysis of scientific and methodological literature, curricula, textbooks and a professionally - oriented English course.

- It selects and tests as a result of appropriate methodical and methodological study of scientific -methodological literature the effective strategies and methods of training and develops on their basis the exercises on working with audio texts for listening aimed at mastering the English historical sublanguage.
- The proposed model presents the methodology for teaching listening comprehension in a professionally - oriented English course as well as its functional and content characteristics, the effectiveness of which is substantiated in the course of experimental learning.

The theoretical value of the research: it develops theoretically and experimentally justifies the efficiency of the proposed methodological system from the point of view of cognitive - communicative approach. Accordingly, it proposes a flexible and dynamic English teaching system, which, together with other types of speech activity, will essentially improve the efficiency of teaching listening skills.

The practical value of the research

It develops a methodological system of teaching listening comprehension at a non-linguistic faculty based on a three-stage procedural model. It involves a complex of stage-based exercises, tasks and texts of listening, which can be successfully applied in the professionally - orientated English courses. The conclusions, final results and proposed theses of the research can be successfully applied by those who design new courses, make syllabuses and plans, by authors of text-books and those who teach practical English.

The structure and volume of the research: the dissertation consists of an Introduction, two chapters, conclusion, bibliography and appendices.

On the topic of the dissertation 7 articles have been published.